

# Ս. ՅԱԿՈՒԻ ԵՆՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ — ԲԵՄԱԿԱՆՔ

\* Կիր. 1 Սեպտ.— Ը. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգ. Տ. Վաղարշ Վրդ. Խմբատուրեան:

\* Բշ. 2 Սեպտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Հոգ. Տ. Յովսէփ Վրդ. Մամոր:

\* Գշ. 8 Սեպտ.— Ս. Յովակիմայ և Աննայի և կանանցն Իդաքերից: Ս. Պատարագը մատուցուցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը, Հոգ. Տ. Գիսակ Վրդ. Մորատեան:

\* Եք. 7 Սեպտ.— Ս. Առաքելոյն՝ Թովմաշի, Յակոբայ և Ծմաունի: Ս. Պատարագը մատուցուցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պաշրամեան:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս, Ապրանեան:

\* Կիր. 8 Սեպտ.— Գիւս Գօտոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Սեան Վրդ. Զարիպեան: Երթ ու դարձի թափօրներուն նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպսկոպոս:

\* Եք. 14 Սեպտ.— Նիկիոյ Ա. Ժողովոյն (325): Ս. Պատարագը մատուցուցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պաշրամեան:

\* Կիր. 15 Սեպտ.— Ծ. Պատարագը մատուցուցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Աղան Վրդ. Պալիօզեան:

\* Որք. 20 Սեպտ.— Ս. Կորնի Ծննդեան

Քանդակաւոր նախատօնակը պաշտուցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Ծանէ Արքեպս. Աճէմեանի:

\* Եք. 21 Սեպտ.— Ծնունդ Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպսկոպոսի գլխարդութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի ձոր ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր օրուան հանդիսարդ Ս. Պատարագը՝ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուց Հոգ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբիկեան:

\* Կիր. 22 Սեպտ.— Բարեկենդան Ս. Ռաչի պահոց: Ս. Պատարագը մատուցուցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Վանքի Տեսուչը՝ Հոգ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

\* Որք. 27 Սեպտ.— Երեկոյեան ժամերգութեան աարտին, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպսկոպոս դպրութեան չորս աստիճանները շնորհեց Ս. Աթոռոյ ժառանգաւորաց Վարժարանի սաներուն: Ապա շքնորհեց կիսասարկաւագութեան աստիճան Ընծայարանի ուսանողներ Տրց. Յարութիւն Աթշեանի և Տրց. Հրանդ Ծերպէթեանի:

\* Եք. 28 Սեպտ.— Տօն Եկեղեցոյ ի Նաւակառիս Ս. Ռաչին: Ս. Պատարագը մատուցուցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Նորիհան Վրդ. Մանուկեան: Ս. Պատարագի ընթացքին Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպսկոպոս կատարեց սարկաւագակաճ ձեռնադրութիւն:

— Խայկերացի մեծահանգէս նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, որ ապա Ս. Ռաչիպատի մասունքը թափօրով փոխադրեց Աւագ Սեղան: Արարողութեան աարտին կատարուցաւ քահանայական կոչման արարողութիւն:

— Գիշերակիզքին, Մայր Տաճարին մէջ կատարուցան «Եկեղեց»ի և Հսկման կարգեր: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեան:

\* Կիր. 29 Սեպտ.— Տօն ՎԵՐԱՑՄԱՆ Ս. ԽԱՉԻՆ: Օրուան հանդիսարդ Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց: Երկու արեղաներու ձեռնադրութիւնը

կատարեց և Խաչի խորհուրդին շուրջ քարոզեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը: Ս. Պատարագէն ետք, ըստ սովորութեան կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսատըր պաշտօն Ս. Աթոռոյս և ազգիս բարերարներ՝ Կարապետ և Գրիգոր Մելքոնեան եղբայրներու հոգիներուն համար, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս Ալլանեանի:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած Խաչվերացի մեծ «Անդատան»ին նախագահեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը: Ապա Ե. Ամենապատուութիւնը կատարեց վեղարի տըլուրիները նորընծաներուն:

\* Բշ. 30 Սեպտ.— Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, նախագահութեամբ Հոգշ. Տ. Աղան Վրդ. Պալիօզեանի:

\* Եք. 5 Հոկտ.— Տօն Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերամատուրին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գիսակ Վրդ. Մուրատեան:

\* Կիր. 6 Հոկտ.— Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աղան Վրդ. Պալիօզեան:

\* Որ. 11 Հոկտ.— Նախատօնակը պաշտուեցաւ Ղպտիներու Ս. Գէորգ եկեղեցիին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Գարեգին Եպս. Գազանճեան, Աստուրայիոյ Հայոց Առաջնորդը, որ Երուսաղէմ ժամանած էր հիւրաբար առջի օր:

\* Եք. 12 Հոկտ.— Ս. Գէորգայ զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտիներու Ս. Գէորգ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփայեան: Ս. Պատարագէն ետք Միաբանութիւնը պատուաւիրուեցաւ Ղպտիներու վանքի Հոգեջնորհ Տեսուչէն: Երթուղարձի թափօրները գլխատրեց Գերշ. Տ. Գարեգին Եպիսկոպոս:

— Կէսօրէ ետք, փղղուան Վարագայ Ս. Խաչի տօնին առիթով, Միաբանութիւնը, Գերշ. Տ. Գարեգին Եպս. Գազանճեանի զըլխատրութեամբ մուտք գործեց Ս. Յարութիւն

թեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ապա կատարուեցաւ Տճօրինակն Արքատեղիներու այցելութեան հանդիսատըր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Խաժակ Վրդ. Պատարագէն:

\* Կիր. 18 Հոկտ.— Տօն Վարագայ Ս. Խաչին (660): Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ապա, Գերշ. Տ. Գարեգին Եպիսկոպոս մատուց օրուան հանդիսատըր Ս. Պատարագը՝ Բրիտանի Ս. Գերեզմանին վրայ և «Հայր մեր»էն առաջ ժողովուրդին հաղորդեց Ազգիս Հայրապետ Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի մօր՝ Տիրամայր Սիրանոյշ Պայծեանի մահուան տխուր յուրը: Առ այդ, զանց առնուեցաւ Վահափառի Գահակալութեան 19րդ տարեդարձի առթիւ կատարուելիք մաղթանքը և փոխաբէնը, Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսատըր պաշտօն՝ հանգուցեալ Տիրամօր բարի հոգիին համար, նախագահութեամբ Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գարիկեանի:

— Նոյն օր տեղի ունեցաւ Թեմլէի Ս. Գէորգայ մատուռին տարեկան ուխտագնացութիւնը: Գերշ. Տ. Ծախէ Արքեպիսկոպոս նախագահեց արարողութիւններուն: Ս. Պատարագը մատուց Ամերիկայէն հիւրաբար Ս. Աթոռ ժամանած, Ս. Աթոռոյս միաբան և Տիրութիւն Հոգևոր Հովիւ Հոգշ. Տ. Փառէն Վրդ. Աւետիքեան, և քարոզեց Ս. Գէորգի կենսաբիւն ու նահատակութեան մասին:

\* Եք. 19 Հոկտ.— Ս. 72 աշակերտացն Բըրիտոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին զանիթը՝ Ս. Գէորգայ սեղանի վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նուրհան Վրդ. Մանուկեան:

\* Կիր. 20 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

\* Եշ. 24 Հոկտ.— Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Ս. Պատարագը մատուց նորընծայ Հոգշ. Տ. Գեղարդ Արդ.

Տառադարեան: Ներկայ էր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը:

\* Որ. 25 Հոկտ.— Մայր Տաճարի Ասագ Սեղանին վրայ իր անդրանկի Ս. Պատարագը մատուց նորընծայ Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պայեան: Ներկայ էր Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը:

— Թարգմանչաց հանդիսատր նախատուանկին ի Ս. Յակոբ նախագահեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը:

\* Եր. 26 Հոկտ.— Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց (Տօն ազգային և եկեղեցական): Մայր Տաճարի Ասագ Սեղանին վերայ պատարագեց նորընծաներուն ուսուցիչն ու վարժիչը՝ Հոգ. Տ. Վահան Վրդ. Թօփայեան: Նորընծաները կը սպասարկէին իրեն: Ներկայ էր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, որուն անուն տօնն էր այդ օր: Ս. Պատարագէն ետք, ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն՝ Ազգիս և Ս. Աթոռոյս հանգուցեալ մեծանուն բարերար Գալուստ Կիլիկեանի, տիկնոջ և ծնողաց հոգիներուն համար: Սուն արարողութեան նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

\* Կիր. 27 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսարիչի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

\* Եր. 2 Նոյմ.— Ս. Չորից Աւետարանչացրն: Արօրուան Ս. Պատարագը, որ կը մատուցուի սովորաբար Ս. Յարութեան Տաճարի գաւթին Ս. Յովհաննէս Աւետարանչի մատուռին մէջ, մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, Տաճարի բակը նորոգութեանց շինուածանիւթերով գոստուած ըլլալով: Ժամարարն էր Հոգ. Տ. Գիսակ Վրդ. Մանուկեան:

\* Կիր. 3 Նոյմ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ասագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Խածակ Վրդ. Պարսամեան:

\* Էշ. 4 Նոյմ.— Ս. Յովսէփայ Աստուածաբորն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տե-

սույն՝ Հոգ. Տ. Գիսակ Վրդ. Մորատեան: Երթողարձի թափօրներուն նախագահեց Հոգ. Տ. Հայկասէր Վրդ. Պարսամեան:

\* Եր. 9 Նոյմ.— Ս. Երկոտասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տառադարեան:

— Կէսօրէ ետք, վաղուան Գիտ Խաչի տօնին առիթով, Ամեն. Պատրիարք Ս. Հօր զընխատրութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մտրոց գործէ Ս. Յարութեան Տաճար: Պատանատեղիին և Ս. Գերեզմանի ուխտերէն ետք, Միաբանութիւնը իջաւ Գիտ Խաչի արք, որուն ուխտէն ետք անոր կից՝ Ս. Գրիգոր Լուսարիչի եկեղեցիին մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատուանկ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղիներու արջելութեան հանդիսատր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգ. Տ. Հայկասէր Վրդ. Պարսամեան:

\* Կիր. 10 Նոյմ.— Գիտ Խաչ: Գիշերային և առաստուան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Լուսարիչի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Աղան Վրդ. Պայիօզեան: Ապա, Ամեն. Պատրիարք Ս. Հօր զխառնութեամբ, կազմուեցաւ մեծահանդէս թափօր՝ որ նախ իջաւ Գիտ Խաչի արք և բարձրանալով Ս. Գերեզմանի շրջափակը, երեք անգամ թափօր դարձաւ Ս. Գերեզմանին շուրջ: Նորին Լմենսպատուութիւնը, մայրականի ներքև, Կենաց Փայտի մատուցելով կ'օրհնէր Տաճարոյ յեցնող բազմութիւնը. Ս. Գերեզմանի կարգէն ետք երգուեցաւ «Խաչի թո Քրիստոս» և կատարուեցաւ խնկարկութիւն, որմէ ետք Ս. Լուսարիչի եկեղեցիին մէջ վերջ զընտու տարեկան վերջին այս հանդիսութիւնը Ս. Յարութեան Տաճարին:

\* Եր. 16 Նոյմ.— Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պայեան:

\* Կիր. 17 Նոյմ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսարիչի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Վրդ. Նազարեան:

\* Որ. 22 Նոյմ.— Ս. Հրեշտակապետաց  
նախատօնակը պաշտուէցաւ համանուն եկե-  
ղեցիին մէջ: Հանդիսապետն էր Լուսարարա-  
պետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

\* Եր. 28 Նոյմ.— Տօն Ս. Հրեշտակապե-  
տացն Գաբրիէլի և Միքայէլի: Առաւօտեան  
ժամերգութիւնը պաշտուէցաւ և Ս. Պատար-  
ազը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ:  
Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպ-  
եան: Ս. Պատարազէն ետք, ընկալեալ սովո-  
րութեան համաձայն, կատարուէցաւ հոգե-  
հանգստեան պաշտօն՝ Ս. Աթոռոյ բարերար-  
ունի Ադամի Ճէվահիրճեանի և պարագա-  
ներոս հոգիներուն համար, նախագահու-  
թեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ  
Արքեպիսկոպոսի, որմէ ետք Միաբանութիւ-  
նը պատուասիրուէցաւ Վանքի Տեսչարանին  
մէջ՝ Տեսչ. Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալ-  
եանի կողմէ:

\* Կիր. 24 Նոյմ.— Ս. Պատարազը մա-  
տուցուցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամա-  
րարն էր Վանքի Տեսչ. Հոգշ. Տ. Վահան  
Վրդ. Թօփալեան:

\* Եր. 30 Նոյմ.— Ս. Առաքելոցն Անդրիի և  
Փիլիպպոսի: Ս. Պատարազը մատուցուցաւ  
ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Ամերիկալէն  
հիւրաբար Ս. Աթոռ ժամանած Արծ. Տ. Հայկ  
Բն. Տօնիկեան:

\* Կիր. 1 Դեկտ.— Բարեկենդան Յիսնակի  
պահոց: Ս. Պատարազը մատուցուցաւ ի Ս.  
Յարութիւն, Ս. Լուսաորիչ եկեղեցիին մէջ:  
Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալ-  
եան:

\* Գշ. 3 Դեկտ.— Ս. Կորնի Ընծայման հան-  
դիսատը նախատօնակը պաշտուէցաւ Մայր  
Տաճարին մէջ, նախագահութեամբ Լուսարար-  
ապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի:

\* Դշ. 4 Դեկտ.— Ընծայումն Ս. Աստու-  
ածանի: Առաւօտուն, Գերշ. Տ. Ծահէ Արքեպ. Ա-  
ճէմեանի գլխարարութեամբ, Միաբան հայ-  
րէի ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմա-  
նի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործե-  
ցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրու-  
թօր Ս. Գերեզմանին վրայ օրուսն հանդիսա-

տը Ա. Պետարազը մատուց Գերշ: Հանդիսա-  
պետ Արքազանը, որմէ վերջ նախագահեց,  
ընկալեալ սովորութեան համաձայն, ազգա-  
յին թարեթար Կիլպպի Կիլպպեանցի և  
Կիլպպեանցի գերդաստանի ներշնչուներուն  
հիմար կատարուած հոգեհանգստեան հան-  
դիսատը պաշտուածնքին:

\* Եր. 7 Դեկտ.— Ս. Գրիգորի Աքանչելա-  
գործին: Ս. Պատարազը մատուցուցաւ ի Ս.  
Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան  
Վրդ. Թօփալեան:

\* Կիր. 8 Դեկտ.— Ս. Պատարազը մատուց-  
ուցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ.  
Տ. Աղան Վրդ. Պայիօզեան:

\* Որ. 13 Դեկտ.— Առաջին Լուսաորչաց  
նախատօնակը պաշտուէցաւ Մայր Տաճարին  
մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Ծահէ  
Արքեպ. Աճէմեան:

\* Եր. 14 Դեկտ.— Ս. Առաքելոց և առաջին  
Լուսաորչացն մերոց՝ Թաղէտի և Բարթո-  
ղիմէոսի: Ս. Պատարազը մատուցուցաւ Ս.  
Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Գլխադրի մա-  
տուցին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նոր-  
հան Վրդ. Մանուկեան:

\* Կիր. 15 Դեկտ.— Ս. Պատարազը մա-  
տուցուցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաորիչ  
եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աս-  
պետ Արդ. Պալեան:

\* Դշ. 18 Դեկտ.— Նախատօնակին ի Ս.  
Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Ծահէ Արք.  
Աճէմեան:

\* Եշ. 19 Դեկտ.— Տօն Ս. Հարցն Եգիպ-  
տացոց: Ս. Պատարազը մատուցուցաւ Մայր  
Տաճարի Ս. Մակարայ մատուցին մէջ: Ժա-  
մարարն էր, ըստ սովորութեան, խոստովա-  
նահարը՝ Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարի-  
յուսեան:

\* Եր. 21 Դեկտ.— Ս. Նիկողայոսի Աքան-  
չելագործին: Ս. Պատարազը մատուցուցաւ  
ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գե-  
ղարդ Արդ. Տառտլարեան: Վերաբերումը  
կատարուցաւ Մայր Տաճարի ներքին գալի-

թը գտնուող Ս. Նիկողայոսի սեղանին վրա-  
յնն:

— Ս. Կոլոսի Յղութեան տօնի հանդիսատր  
նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին  
մէջ, նախագահութեամբ Լուսարարապետ  
Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի:

\* Կիր. 22 Դեկտ.— Յղութիւն Ս. Աստու-  
ծածնի և Բարեկենդան Ս. Յակոբայ պահոց:  
Առաւօտեան ժամը 9ին, Լուսարարապետ  
Գերշ. Տ. Հայրիկ Արքեպ, Ասլանեանի գր-  
խատրութեամբ, Միաբան հայրեր ինքնա-  
շարժներով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հը-  
րաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստու-  
ծածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմա-  
նին վրայ օրուան հանդիսատր Ս. Պատարա-  
գը մատուց Գերշ. Հանդիսապետ Արքազանը:

\* Որ. 27 Դեկտ.— Նախատօնակին ի Ս.  
Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ.  
Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

\* Ծր. 28 Դեկտ.— Ս. Յակոբայ Մծբնայ  
Հայրազներին; Ս. Պատարագը մատուցուե-  
ցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ.  
Հայկասեր Վրդ. Պայրամեան: Վերաբերուեր  
կատարուեցաւ Առագ Սեղանին դիմաց՝ Սուր-  
բին նկարով շինուած շարժական սեղանին  
վրային:

\* Կիր. 29 Դեկտ.— Ս. Պատարագը մա-  
տուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ  
նկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վա-  
հան Վրդ. Թօհայիան: